Հայաստանում բուհերի կառավարման համակարգը լուրջ թերություններ ունի.
ԵԳԱ-ի ռեկտոր Արամ Իսաբեկյան - «Թերթ.am», 15.01.2014

Հայաստանում բուհերի կառավարման համակարգը լուրջ թերություններ ունի: Tert.am-ի հետ զրույցում նման մտահոգություն հայտնեց Երևանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը:

«Առավել հարմար ու արդյունավետ կրթություն ապահովելը հնարավոր է բոլոնյան գործընթացին մասնակից բուհերի կառավարման համակարգերի միասնականացման միջոցով: Դա թույլ կտա նաև օգտագործել 21-րդ դարի հնարավորությունները»,-ասաց Արամ Իսաբեկյանը:

Ըստ ռեկտորի՝ միջազգային տարբեր ծրագրերին մասնակցությունն առաջին հերթին՝ օգուտ է բերում բուհին, քանի որ ուսանողների, դասախոսների փոխանակումներից զատ դրանք կնպաստեն նաև բուհում ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագիտությունների ներդրմանը:

Արամ Իսաբեկյանը նկատեց, որ, օրինակ, Հայաստանում չկան արվեստի մենեջմենտի մասնագետներ, իսկ միջազգային կրթական ծրագիրը նաև կօգնի, որ բուհը նոր աստիճանի բարձրանա նման մասնագետների պատրաստմամբ:

https://www.tert.am/am/news/2014/01/15/isabekyan2/974989